

բընումներուն, արուեստի կրթութեան համար բոլորովին հակոտնեայ, անմարսելի և անըմբռնելի էր:

Տպագրութիւնը Եւրոպական արհեստ մ'ըլլալով Հայերն ալ ստիպուած էին իրենց տպագրական առաջին փորձերը օտար երկրի մէջ կատարել, ենթարկուիլ այդ արուեստին՝ որ կը տիրապետէր տպա-



թ. Յ. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 481

գրութեամբ զարգացած Եւրոպական երկիրներուն մէջ: Իրենց համար ոչ միայն դժուարածախս, այլ գրեթէ անկարելի պիտի ըլլար Հայ մանրանկարիչներ բերել Հայաստանէն իրենց Հայ տպագրական սկզբնական աշխատութիւնները Հայ արուեստով ճոխացնելու համար: Դիւրին բան չէր այն ատեն հրատարակութիւն մը գլուխ բերել, խնդիրը ալ աւելի կենճոտեղու հարկ չկար Հայ արուեստագէտներ փնտռելով զանոնք ալ Եւրոպա բերելու: Ասկէ զատ զիցուք թէ ատիկա կարելի ըլլար կատարել, սակայն Հայերը փայտափորագրիչներ չէին, և տպագրութեան համար նման փորագրութեանց պատրաստութիւնը ղեռ գիրենք չէր ստիպած ձեռնամուխ ըլլալու արուեստի արտայայտութեան այդ ձեւին

մէջ, որ մեր մէջ մուտ գտաւ 1700ական թուականներէն վերջ միայն. այն ալ իբր հետեւողութիւն Եւրոպական ոճերուն: Ուրեմն դարձեալ Եւրոպացիներուն կ'իյնար մեր հին տպագրութիւնները պատկերազարդելու արհեստի կէտը: Իսկ առանց արուեստն հասկնալու՝ արհեստը չի կրնար հաւատարիմ թարգմանը ըլլալ արուեստին հոգւոյն:

Անտարակոյս Հայ հին հրատարակիչները իրենց տրամադրութեան տակ ունէին նաեւ Հայ մանրանկարեալ ձեռագիրներ, սակայն արդէն վերը բացատրուած պատճառներով այդ հին Հայ արուեստի նմոյշները ներշնչման աղբիւր չեղան Հայ տպագրութեան պատկերազարդութեան համար: Մինչ զարդակերպերը հեշտիւ գրաւեցին Հայ ձեռագրաց մէջ ունեցած իրենց զարգացած դիրքը՝ նաեւ հայ տպագրութեանց զարդերուն մէջ. թէեւ հոն իսկ՝ Մեղապարտ Յակոբի հրատարակութեան մէջ՝ հայերէն զլխատառ զարդագրերը Հայ ճաշակով փորագրուած են:

Փայտափորագրութիւնը շատ ընդարձակ կերպով զարգացած արուեստ մը չէր հին Հայոց մօտ: Թէեւ ԺԵ-ԺԶ դարերէն հասած է Սեւանայ վանքի փայտեայ դուռը (Երեւանի Հայ Պետական Թանգարան) և այլուր ալ ի Խրիմ կը յիշուին հին ընկուզեայ քանդակեալ դռներ, այսուհանդերձ փայտափորագրութիւնը Հայոց մէջ տարածուած արուեստ մը չէր: Թէ ինչո՞ւ, այդ մասին որոշ չեմ կրնար ըսել, սակայն հաւանաբար յարմար փայտի պակասը զլխաւոր պատճառներէն մին էր: Անմիջապէս աւելցընեմ որ հիւսուածեղէններու համար տպածոններու կաղապարները փայտէ կ'ըլլային, և ատոնց մեծագոյն մասը Հայ արհեստագէտ արուեստագէտները կը պատրաստէին, օրինակ կ. Պոլսոյ Լազմաներուն տպածոյ կաղապարները: Դժբախտաբար մոռացութեան մատնուած այս արհեստին՝ Լազմաններէն՝ թէ՛ արհեստին և թէ՛ արուեստին մասին, որուն մէջ Հայերը տիրապետող տեղը ունեցած են, ոչինչ կը մնայ առ ի գիտութիւն ուսումնասիրողներուն: